ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2012թ. փետրվարի 15 թիվ 18 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1582-Ն որոշման 3-րդ կետը կարգադրում եմ՝

1.Հաստատել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի կազմը համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի աշխատակարգը համաձայն թիվ 2 հավելվածի:

Ս. ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված թիվ 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2012թ փետրվարի 15 -ի թիվ 18-Ա
կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՀ Արագածոտնի մարզպետ - հանձնաժողովի նախագահ
ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ - հանձնաժողովի նախագահի տեղակալ
Հանձնաժողովի անդամներ.
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ,
ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/,
ՀՀ Ազգային անվտանգության ծառայության Արագածոտնի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/,
ՀՀ Առողջապահության նախարարության ՊՀՀ տեսչության մարզային փորձագիտական կենտրոնի տնօրեն /համաձայնությամբ/,
ՀՀ Առողջապահության նախարարության ՊՀՀ տեսչության մարզային կենտրոնի տնօրեն,
<< Հայէլեկտրոցանցեր>> ՓԲԸ <<Մուսալեռ>> մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/,
<<Արմեն-Տել>> ՀՁ Արագածոտնի տարածքային կենտրոնի տնօրեն /համաձայնությամբ/,
<< Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ Աշտարակի տեղամասի պետ/համաձայնությամբ/,
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության պետ/համաձայնությամբ/,
<<Հայռուսգազարդ>> ՓԲԸ Արագածոտնի ԳԳՄ-ի տնօրեն/համաձայնությամբ/,
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Արագածոտնի մարզային հիդրոմետ ծառայության պետ/համաձայնությամբ/,

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված թիվ 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2012թ փետրվարի 15-ի թիվ 18-Ա
կարգադրության

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպումը:
2. Գնահատման ու հաշվառման են ենթակա Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները:
3. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար հանձնաժողովը՝
   1) կազմում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.
   2) ուսումնասիրում և գնահատում է վնասված գույքի վիճակը.
   3) գնահատում է գույքին պատճառված վնասի չափը:
4. Մարզային հանձնաժողովը գործում է հետևյալ ուղղություններով՝
   1) գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.
   2) բնակչության գույքին հասցված վնասների գնահատում.
   3) ենթակառուցվածքներին հասցված վնասների գնահատում.
   4) բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում:
5. Մարզային հանձնաժողովը քննարկում է համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը և համաձայնեցված ակտեր ներկայացնում է հանրապետական հանձնաժողովին:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ